Social Security

A Snapshot

Ընկերային Ապահովություն

Մի Հակիրճ Ակնարկ
Իրողությունների այս թղթիկը մի հակիրճ ակնարկ է Ընկերային Ապահովության, Լրացուցիչ Ապահովության Եկամտի (SSI) և Medicare-ի ծրագրերի ամենից Կարևոր առանձնահատկությունների մասին։ Այս ծրագրերի մասին մասնավոր տեղեկություններ դուք կարող եք գտնել Ինտերնետի միջոցով՝ դիմելով www.ssa.gov էջին, կամ հեռախոսելով մեր անվճար համարին՝ 1-800-772-1213, հետաքրքրուելու համար Ընկերային Ապահովության այլ հրատարակություններով կամ Ընկերային Ապահովության որևէ ներկայացուցչի հետ կրուցել խնդրելով։

Ընկերային Ապահովության Համարը

Ընկերային Ապահովությունից ձեր Ստանալիք գումարները կհաշվարկվեն համաձայն ձեր Ընկերային Ապահովության համարի ներքև արձանագրված շահույթի։ Հետևաբար, անհրաժեշտ է, որ դուք միշտ օգտագործեք համապատասխան համարը։ Բացի այդ, պետք է վստահ լինեք, որ աշխատանքի վայրում ձեր օգտագործած անունը այն նույն անունն է, որը երևում է ձեր Ընկերային Ապահովության տոմսի վրա։ Եթե դուք երբևէ փոխեք ձեր անունը, դուք նաև պետք է փոխեք ձեր անունը ձեր Ընկերային Ապահովության տոմսի վրա։ Ընկերային Ապահովությունը ձեվանից ոչինչ չի գանձի այս ծառայության համար։ Նույնիսկ փոքրիկ երեխաներ ունեն Ընկերային Ապահովության համարներ, որովհետև ծնողները պետք է համարը նշեն իրենց եկամտահարկի թերթիկների վրա, որպեսզի նրանց ներկայացնեն որպես ծնողներից կախյալ անհատներ։

Ընկերային Ապահովության Հարկերի Վճարումը

Եթե դուք աշխատումեք մեկ ուրիշի համար, ձեր գործատերը ձեր աշխատավարձից պահում է Ընկերային Ապահովության Medicare-ի հարկերը, իր կողմից դրան ավելացնում է նույնքան գումար, այդ հարկերը ուղարկում էմ Ներքին Եկամտահարկի ծառայության (IRS) և ձեր եկամուտի մասին տեղեկագրում է Ընկերային Ապահովության։ Եթե դուք եք ձեր Գործատերը, դուք ձեր Ընկերային Ապահովության հարկերը վճարում եք ձեր եկամտահարկի թերթիկը լրացնելիս, և IRS-ը ինք Ընկերային Ապահովության կտեղեկացնի ձեր շահույթի մասին։ Դուք կվճարեք Գործավոր/գործատերի բաժնին համահավասար միացյալ սակ, բայց կան հատուկ պահումներ, որոնք կտրելիս՝ դուք կարող եք հավասարակշռել ձեր հարկի սակը։

Ընկերային Ապահովության Վարկեր Շահելը

Աշխատելիս և հարկեր վճարելիս՝ Դուք շահում եք «վարկեր», որոնք հաշվի են առնվում հետագայում Ընկերային Ապահովության նպաստներին իրավասու դառնալու կապակցությամբ։ Դուք կարող եք յուրաքանչյուր տարի շահել առավելագույնը չորս վարկ։ Մարդկանց մեծ մասի համար անհրաժեշտ է 40 վարկ (10 տարվա աշխատանք), որպեսզի նպաստներից օգտվելու իրավասու լինեն։ Ավելի երիտասարդ անձեր կարիքն ունեն նվազ վարկերի՝ անաշխատունակության կամ վերապրողի նպաստներից օգտվելու իրավասու լինելու համար։

Ընկերային Ապահովության Նպաստների Պատկերացումը

Ձեր Ընկերային Ապահովության նպաստը մի տոկոսն է ձեր շահույթների, որի միջինը հաշվի է առնվում ձեր աշխատանքային կյանքի մեծ մասի հաշվառումով։ Ընկերային Ապահովությունը երբեք չի ստեղծվել ձեր միակ եկամուտը լինելու նպատակով՝ հանգստյան կոչվելուց կամ անաշխատունակ դառնալուց, կամ էլ կալմելու ձեր ընտանիքի միակ եկամուտը՝ ձեր մահվան դեպքում։ Նրա նպատակն է լրացնել այլ եկամուտները, որոնք դուք ունեք կենսաթոշակի ծրագրերի, խնայողությունների, ներդրումների և այլ միջոցներով։ Ցածր եկամուտով աշխատավորներ կստանան ավելի բարձր սակով հատուցում, քան բարձր եկամտի սահմաններում գտնվող անհատները. սակայն միջին շահույթով որևէ աշխատավոր կարող է ակնկալել հանգստյան կոչվածի նպաստներ, որոնք կներկայացնեն համարյա 40 տոկոսը իր ողջ կյանքում ունեցած միջին շահույթի։ Անվճար նախահաշիվ ստանալու համար հանգստյան կոչվածի, անաշխատունակի կամ վերապրողի նպաստների մասին, որոնք կվճարվեն ձեվ կամ ձեր ընտանիքին, հեռախոսեցեք Ընկերային
Ապահովություն 1-800-772-1213 համարով։

Ընկերային Ապահովության Նպաստներ

Ձեր Ընկերային Ապահովության հարկերի միջոցով վճարվող նպաստները բաժանվում են չորս գլխավոր խմբերի՝ հանգստյան կոչվածություն, անաշխատունակություն, ընտանիքի նպաստներ, վերապրողներ Medicare։ (SSI-ի նպաստները, որոնք Ընկերային Ապահովության հարկերի միջոցով չեն ֆինանսավորվում, քննարկվում են մի ուրիշ հատվածում)։

Հանգստյան Կոչվելը

Նպաստները վճարվում են հանգստյան կոչվելու իսկական տարիքում (նվազեցված նպաստները տրամադրելի են ամենաշուտը 62 տարեկանից սկսած) ցանկացա անհատի համար, որը ունի Ընկերային Ապահովության բավարար վարկեր։ Հանգստյան կոչվելու իսկական տարիքը 65-ն է 1938-ից առաջ ծնվածների համար։ Տարիքը աստիճանաբար բարձրանում և հասնում է մինչև 67-ի՝ 1960-ին և
ավելի ուշ ծնվածների համար։ Իրենց հանգստյան կոչվածությունը հանգստյան կոչվելու իսկական տարիքից այն կողմ հետաձգող անհատները կստանան հատուկ վարկ՝ իրենց նպաստ չստացած յուրաքանչյուր ամսի համար, մինչև դառնան 70 տարեկան։

Անաշխատանակություն

Նպաստները կարող են վճարվել Ցանկացած տարիքում այն անհատներին, ովքեր ունեն բավարար Ընկերային Ապահովության վարկեր և ովքեր ունեն սուր մարմնական կամ մտային վնասվածք, որը ենթադրվում է, որ կխանգարի նրանց հիմնական աշխատանք կատարել մեկ կամ ավելի տարի, կամ ովքեր գտնվում են մահացություն պատճառողհանգամանքում։ Սովորաբար ամսական $740 կամ ավելի շահույթը համարվում է հիմնական։ Անաշխատունակության ծրագիրը ընդգրկում է խթաններ՝ հեշտացնելու վերստին հարմարվելը աշխատանքային ուժին, ներառյալ՝ նպաստների շարունակականությունը և առողջապահական ապահովագրությունը՝ անձի աշխատել փորձելիս։

Ընտանիքի Նպաստներ

Եթե դուք իրավասու եք հանգստյան կոչվածի կամ անաշխատունակության նպաստների, ձեր ընտանիքի այլ անդամներ ևս կարող են նպաստներ ստանալ։ Դրանք ներառում են՝ ձեր կողակիցը, եթե նա 62 տարեկան կամ անց է, կամ եթե 62-ից ցածր է, բայց խնամք է տանում 16 տարեկանից ցածր երեխու, ինչպես նա ձեր երեխաները, եթե նրանք ամուրի են և 18 տարեկանից ցածր, 19-ից ցածր են, բայց դեռ դպրոցեն հաճախում, կամ 18 կամ ավելի են, բայց՝ անաշխատունակ։ Եթե դուք ամուսնալուծված եք, ձեր նախկին կողակիցը կարողէ նպաստներից օգտվելու իրավասու լինել ձեր հաշվին։

Վերապրողներ

Երբ դուք մահանաք, ձեր ընտանիքի որոշ անդամներ կարող են իրավասու լինել օգտվելու, եթե դուք վաստակել եք բավարար Ընկերային Ապահովության վարկեր՝ աշխատելիս։ Ընտանիքի անդամները ընդգրկում են՝ այրին՝ 60 տարեկան կամ ավելի տարեց, 50 տարեկան կամ ավելի տարեց՝ եթե անաշխատունակ է, կամ էլ որևէ տարիքի՝ եթե 16 տարեկանից երիտասարդ երեխու խնամք է տանում. ձեր վավակները՝ եթե չեն ամուսնացել և 18 տարեկանից ներքև են, 19 տարեկանից ներքև են բայց դեռ դպրոց են հաճախում, կամ 18 տարեկան կամ ավելի են, բայց՝ անաշխատունակ. ինչպես նաև ձեր ծնողները՝ եթե դուք նրանց առաջնային ապրուստի միջոցն էիք։ Հատուկ մի անգամվա համար $255 կարող է վճարվել ձեր կողակցին կամ անչափահաս վավակներին, երբ դուք մահանաք։ Եթե դուք ամուսնալուծված եք, ձեր նախկին կողակիցը կարող է իրավասու լինել այրու նպաստների ձեր հաշվին։

Medicare

Medicare-ն ունի երկու բաժիններ՝ հիվանդանոցային ապահովագրություն (երբեմն կոչվող Ա. Բաժին] և բժշկական ապահովագրություն (երբեմն կոչվող Բ. Բաժին]։ Ընդհանուր առմամբ, 65 տարեկանից վեր և Ընկերային Ապահովություն ստացող անհատներ ինքնաբերաբար իրավասուեն դարնում Medicare-ից օգտվելու։ Նույնպես իրավասու են անհատներ, ովքեր երկու տարի շարունակ ստանում են անաշխատունակության նպաստներ։ Այլ անհատներ պետք է ներկայացնեն մի հայցագիր։ Ա. Բաժինը վճարվում է մասնակիորեն այնպիսի անհատների
Ընկերային Ապահովության հարկից, ովքեր դեռ աշխատում են։ Դա օգնում է վճարելու հիվանդանոցային հիվանդի խնամքի, որակավոր բուժքույրության և այլ ծառայությունների համար։ Բ. Բաժինը վճարվում է մասնակիորեն ամսական սկզբնավճարներովը արձանագրված անհատների,

ինչպես նաև ընդհանուր եկամուտներից։ Դա կօգնի վճարելու այնպիսի բաների համար, ինչպիսին են բժշկի սակերը, ոչ-հիվանդանոցային հիվանդների հիվանդանոց այցելությունները և այլ բժշկական ծառայություններ և պիտույքներ։

Լրացուցիչ Ապահովության Եկամտի Նպաստներ

SSI-ը կատարում է ամսական վճարումներ այն անհատների համար, ովքեր ունեն ցածր եկամուտ և քիչ ստացվածքներ։ SSI ստանալու համար, դուք պետք է լինեք 65 տարեկամ կամ ավելի, կամ էլ՝ անաշխատունակ։ Ինչպես երեխաներ, այնպես էլ չափահասներ իրավասու են SSI անաշխատունակության վճարումներից օգտվելու։ Ինչպես իր անունն է հուշում, Լրացուցիչ Ապահովության Եկամուտը լրացնում է ձերեկամուտը մինչև վանապան մակարդակներ՝ նայած թե որտեղ եք բնակվում։

Դաշնակցային կառավարությունը վճարում է մի հիմնական սակ, իսկ որոշ նահանգներ գումար են ավելացնում դրան։ Ստուգեք ձեր տեղի Ընկերային Ապահովության գրասենյակից, թե ինչ են SSI սակերը ձեր նահանգում։ Ընդհանուր առմամբ, SSI ստացող անհատներ նաև Իրավասու են օգտվելու Medicare-ից, պարենատոմսերից և այլ ծառայություններից։

SSI նպաստները չեն վճարվում Ընկերային Ապահովության վարկային գումարներից և հիմնված չեն անցած շահույթների վրա։ Փոխարենը, SSI նպաստները ֆինանսավորվում են ընդհանուր հարկի եկամուտներից ապահովում են մի նվազագույն ամսական եկամուտ տարե անաշխատունակ անձերին։

Երբ Եվ Ինչպես Դիմել Ընկերային Ապահովության կամ SSI-ի Համար

Դուք Ընկերային Ապահովության կամ SSI-ի անաշխատունակության նպաստների համար պետք է դիմեք երբ խիստ անկարող եք աշխատելու համար, իսկ վերապրողների նպաստների համար՝ երբ ընտանիքի գլխավոր ապրուստ ապահովող անձը մահանում է։ Երբ դուք մտածում եք հանգստյան կոչվելու մասին, դուք պետք է կրուցեք Ընկերային Ապահովության ներկայացուցչի հետ հանգստյան կոչվելու համար ձեր ի մտի ունեցած տարուց մի տարի առաջ։ Հնարավոր է, որ ձեզ համար ավելի նպաստավոր լինի սկսել ձեր հանգստյան նպաստներին գործնականորեն աշխատանքից դադարելուց առաջ։

Նպաստներից օգտվելու դիմումի, տեղեկություն ստանալու կամ Ընկերային Ապահովության մի ներկայացուցչի հետ հարցը քննարկելու համար՝ հեռախոսեցեք մեր անվճար համարին՝ 1-800-772-1213։ Դուք այդ համարը կարող եք օգտագործել նաև ժամադրություն դասավորելու և ձեր տեղի Ընկերային Ապահովության գրասենյակ այցելելու համար։ Մեր հեռախոսի գծերը ամենից շատ ծանրաբեռնված են շաբաթասկզբին ամսեսկզբին, հետևաբար, եթե դուք կարող եք համբերել, նախընտրելի է հեռախոսել ցանկացած այլ ժամանակ։

Երբ դուք նպաստներից օգտվելու համար դիմում կատարեք, դուք պետք է ներկայացնեք ձեր իրավասու լինելը հաստատող փաստաթղթեր, ինչպես՝ ծննդյան վկայագիր նպաստների համար դիմող ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար, ամուսնության վկայագիր՝ եթե ձեր կողակիցն է դիմում, և ձեր ամենավերջին W-2 թերթիկը (կամ հարկի մուծման թերթիկը՝ եթե դուք եք Փեր իսկ գործատերը։]

Ընկերային Ապահովության Վարչությունը բոլոր հեռախոսակրուցներին վերաբերվում է խորհրդապահաբար, դրանք կատարվեն անվճար հեռախոսահամարով թե տեղական գրասենյակներից որևէ մեկին վանգահարելով։ Մենք նույնպես ցանկանում ենք ապահով լինել, որ դուք ստանաք ճշգրիտ և պատշաճ ծառայություն։ Այդ իսկ պատճառով մենք դեպի դուրս կամ դեպի ներս կատարվող որոշ հեռախոսային հաղորդակցությունների ժամանակ գծի վրա ունենք մի երկրորդ Ընկերային Ապահովության ներկայացուցիչ։

Social Security Administration
Snapshot (Armenian)
SSA Publication No. 05-10006
January 2001